ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը՝

Արթուր Համբարձումյան, Պետական պարտքի կառավարման վարչության ռազմավարության և ռիսկերի կառավարման բաժնի պետ

2. Գործուղման վայրը և ժամկետները՝ ք. Բեռլին (Գերմանիայի Դաշնային Հանրապետություն), 2023 թվականի հունիսի 14-ից 16-ը ներառյալ

3. Հրավիրող կողմը՝ Համաշխարհային բանկ

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝ մասնակցություն պարտքի կառավարման տասներեքերորդ տարեկան համաժողովին

5. Քննարկված թեմաները.

- Պարտքի խոցելիությունը և բարձր տոկոսադրույքների պայմաններում պարտքի կառավարման հիմնախնդիրները,
- «COVID» համավարակից հետո առաջ եկած մարտահրավերները՝ պարտքի շուկայում վստահության վերականգնումն ու շուկա կայուն մուտքի ապահովումը,
- պարտքի կառավարման օրենսդրության բարելավումը՝ թափանցիկությունը բարձրացնելու նպատակով,
- պարտքի պորտֆելի արտարժութային ռիսկի կառավարումը տեղական արժույթով պարտատոմսերի շուկայի զարգացման միջոցով,
- պայմանական պարտավորությունների գործիքներ, ֆիսկալ ռիսկերի և պարտքի հետ կապված պայմանական պարտավորությունների կառավարումը,
- Խորհրդարանների դերը պետական պարտքի կառավարման գործում:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Համաժողովին ներկա են գտնվել Համաշխարհային բանկի խմբի երկրների 120 մասնակիցներ: Համաժողովի ընթացքում զեկույցներով հանդես են եկել ինչպես մի շարք երկրների ներայացուցիչներ, այնպես էլ միջազգային փորձագետներ՝ ներկայացնելով պարտքի կառավարման համակարգի արդի մարտահրավերները և զարգացման հեռանկարները: Մասնավորապես, ընդգծվել է բարձր անորոշության պայմաններում պարտքի արդյունավետ կառավարման կարևորությունը, ինչպես նաև պարտքի թափանցիկության բարելավման անհրաժեշտությունը՝ շեշտը դնելով պարտքի գրանցման համակարգերի, որդեգրված քաղաքականությունների և վիճակագրական տվյալների հրապարակայնության վրա: Քննարկվել են նաև պարտքի կառավարման ոլորտի իրավակարգավորումների, պարտատոմսերի ներքին շուկայի զարգացման, ֆիսկալ ռիսկերի և պայմանական պարտավորությունների կառավարմանն առնչվող հարցադրումներ:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Համաժողովի ընթացքում Համաշխարհային Բանկի պաշտոնյաների և այլ երկրների ներկայացուցիչների հետ պայմանավորվածություններ են ձեռք բերվել պարտքի կառավարման ոլորտում փորձի փոխանակման և համագործակցությունը խորացնելու վերաբերյալ: Համաժողովի ընթացքում փաստաթղթեր չեն ստորագրվել:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Առկա չեն

9. Ստորագրությունը, ամսաթիվը.

21 հունիսի, 2023թ.